

ՊԼՐԹԵՒՆԵՐԸ ՊԼՐԹԿԼՍՏԱՆՈՒՄ

Ե Ի

ՆՐԱՆՑ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԱՅՈՑ ԼԵՏ.

(250 Զրիստոսից առաջ — 226 Զրիստոսից յետոյ)

(Շարունակութիւն) *



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԼՏՄԱԿԱՆ


Մ Ա Յ Ր Մ.

Հոգեմաշ ցատով ամենայն գիշեր
 ես քուն եմ մոնում՝ արտասուքն աշքիս,
 եւ խուռն երամով տանջող սրատկերներ
 Շուտ պաշարում են տառապեալ հոգիս . . .
 Մենակ ապրեցայ կարօտ զգոսանքի,
 փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,
 Օրրս սեւացաւ այրող կրքերից,
 Չբզրուայ երբէք մի սիրտ կարեկից:

Եւ քուն եմ մոնում՝ ամենայն գիշեր
 Արտասուքն աշքիս, հոգեմաշ ցատով —
 Հանգիստ չեն տալիս սեւ սեւ պատկերներ,
 Որ պաշարում են ինձ խուռն երամով . . .
 Եւ ահա դու ես որ ինձ այդ պահուն
 երեւում ես, մայր, պտակով զարդարուն.
 Դու զրկում ես ինձ սիրով կաթոզին,
 Գոչում ես՝ որդի՝ ծայնով անմեկին:

Եւ տենում եմ ես քո փշեայ պրսակ,
 Խոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,
 Եւ մի թափանցիկ նուրբ շղարշի տակ՝
 Կուրծքիցդ հոսող արիւնը կաթ կաթ:
 Աչքդ աղերսալիւր տենում եմ վերաս,
 Կանչում եմ քեզ «մայր» ես ծայնով նըսազ,
 Եւ կրկին ելնում անքուն վշտահար —
 Ախ մայր, ի՞նչ անէ որդիդ քեզ համար . . .:

Ե. ՅՈՒՆՏՆՈՍՅԱՆ.



Սինատուրկիսին յաջորդեց իւր որդի Ֆրասա-
 տէս (Հրատ) Գ. 70 թուակ. Քր. առաջ. Այս
 թագաւորն էլ անուշադիր թողեց Տիգրանի
 եւ Միհրդատի 69 թ. իրեն ուղղած օգնութեան
 կողմ, շնայելով որ հայոց կողմից իբրեւ օգնու-
 թեան վարձ առաջարկուած էին Միջագետքը,
 Ադիաքէնէն եւ 70 մեծ հովիտները, այսինքն
 այն ըզրոր երկիրները, որ խլուած էին մի
 ժամանակ պարթեւներից: Ֆրասատէսը ոչ մի-
 այն չօգնեց Տիգրանին, այլ դաշն կոեց հը-
 նովմացեցիների հետ միջնորդութեամբ Լու-
 կուլլոսի ուղարկած դեսպանների. քայց երբ
 այդ դաշնադրութիւնը վերջնականապէս հաս-
 տատելու համար Լուկուլլոսը ուղարկեց Նո-
 րա մօտ Սիստինուսին, պարթեւաց թագաւորը
 սկսեց կասկածել հռովմացեցոց անկեղծու-
 թեան վերայ, որովհետեւ Սիստինուսը Նորան
 անելի լրտես երեւեցաւ քան թէ դեսպան:
 Վերջապէս յարմարագոյն համարեց Նա չէ-
 զոր մնալ: Պոմպէտոսը դեռ չհասած պատե-
 րագմի դաշտը դժշն կոեց Ֆրասատէս Գ-ի
 հետ նոյն պայմաններով, որ առաջարկում
 էին Միհրդատն ու Տիգրանը. քացի դրանից
 Պոմպէտոսը դրդեց պարթեւաց թագաւորին
 յարձակումն գործելու Հայաստանի վերայ:
 Դրա համար այդ միջոցին մեծ յարմարու-
 թիւն եւս կար, որովհետեւ Տիգրանի որդի
 եւ գահակից կրտսեր Տիգրանը իւր հօրից
 քաժանութիւն էր եւ փախել պարթեւների մօտ
 ասրատուանել: Ֆրասատէս նրան շատ լաւ ըն-
 դունեց, ամուսնացրեց իւր աղջկանց մէկի
 հետ եւ նրա առաջնորդութեամբ մի արշա-
 անը ձեռնարկեց դէպի Հայաստան 66 թ.:
 Ժերոնի Տիգրանը փախաւ դէպի լեռները,
 պարթեւները հասան մինչեւ Արտաշատ եւ
 պաշարեցին քաղաքը, քայց որովհետեւ պա-
 շարումը երկարեց, ուստի Ֆրասատէսը յետ
 դարձաւ իւր զօրաց մի մասը թողնելով կրրո-